Արձանագրություն N 2 /արտահերթ նիստ/
«ԷԱՃԱՊՁԲ-2018/16-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«05» «սեպտեմբերի» 2018թ.
ժամը՝ 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Լ.Դանիելյան
Հանձնաժողովի անդամներ՝ Կ.Մկրտչյան, Է.Միրոյան, Հ.Սարգսյան, Մ.Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ.Միրզոյան
Բացակայում էին՝

1. «ԷԱՃԱՊՁԲ-2018/16-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման մասին

Հայտերը բացվել են www.eauction.armeps.am կայքի միջոցով՝ սույն թվականի սեպտեմբերի 5-ին ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. «ԷԱՃԱՊՁԲ-2018/16-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը չեղարկելու մասին

Հաշվի առնելով «Օրթ Իմպլանտ» ՍՊ ընկերության կողմից 05.09.2018թ. թիվ 09/1 գրությամբ բարձրացված հարցադրումը /գրությունը կցվում է/ և այն հանգամանքը, որ էլեկտրոնային աճուրդների հրավերները կազմվում են ավտոմատ եղանակով համակարգի կողմից՝ հանձնաժողովը, նոր ի հայտ եկած հանգամանքներից ելնելով, որոշեց չեղարկել «ԷԱՃԱՊՁԲ-2018/16-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ստորագրությունները

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Լ.Դանիելյան

Անդամներ՝ _____ Կ.Մկրտչյան

_____ Է.Միրոյան

_____ Հ.Սարգսյան

_____ Մ.Գրիգորյան

Քարտուղար՝ _____ Տ.Միրզոյան

«ՕՐԹ ԻՄՊԼԱՆՏ» ՍՊԸ
Ք. Երևան Գրիբոեդովի փ. 3շ.29

«ORT IMPLANT» LTD
հեռ. 010 23 58 54, 096 41 12 10

05.09.2018 N 09/1

«ԷԱՃԱՊՁԲ-2018/16-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային

աճուրդի գնահատող հանձնաժողովին

Հարգելի հանձնաժողով,

Ծանոթանալով «ԷԱՃԱՊՁԲ-2018/16-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերին, որի հայտերի ներկայացման վերջնաժամկետ էր սահմանված սեպտեմբերի 5-ը, իսկ հետաղարձ աճուրդի մեկնարկը՝ սեպտեմբերի 7-ը, հրավերի 7-րդ բաժնի 10-րդ կետի 3-րդ ենթակետի ա) պարբերությամբ հանձնաժողովն առաջին տեղը զբաղեցրած մասնակցից պահանջելու է ուղեկցող գրությամբ ներկայացնել հայտի ապահովման բնօրինակ: Սակայն, եթե Պատվիրատուն առաջնորդվում է 2017 թվականի մայիսի 4-ի ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ, ապա համաձայն վերոհիշյալ որոշման 31-րդ կետի 9-րդ ենթակետի, եթե գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում:

Ստեղծված իրավիճակում առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում և գնման առարկայի գնումների բազային միավորի յոթանասունապատիկը չգերազանցելու դեպքում, արդյոք պարտավոր կլինենք ներկայացնել հայտի ապահովում:

Հարգանքով՝

«Օրթ Իմպլանտ» ՍՊ ընկերության տնօրեն՝ Ս.Սարիբեկյան